ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ПРОТОКОЛ н.2

Заседания оценочной комиссии процедуры под кодом EQ-EAJAPDZB-25/2

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 128 սենյակ ,
-օրը՝ 10.12.2024թ.-ժամը՝ 12:00
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Աղաբեկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Ռամազյան, Ա. Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան
Место заседания: мерия г. Ереван (ул. Аргишти 1), комната 128
День, месяц, год заседания: 10.12.2024г, Время заседания: 12:00ч.
Председатель комиссии: Г. Агабекян
Члены комиссии: У. Рамазян, А. Арутюнян
Секретарь комиссии: И. Егиазарян

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հարցադրումների և դրանց վերաբերյալ պարզաբանումներ տրամադրելու մասին

1. О разъяснении относительно приглашения

/ Գ. Աղաբեկյան, Г. Агабекян /

Հարցադրում 1

Հարգելի գործընկեր ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով աճուրդին մասնակցելու համար խնդրում եմ պարզաբանել հետևյալը՝ Ձեր կողմից նշված է, որ անիվային բազան պետք է լինի 4*2 – Ոչ պակաս 2500 մմ ոչ ավել 3360 մմ, իսկ թափքի ծավալը՝ - Ոչ պակաս 15 մ3 ոչ ավել 16 մ3 , մինչդեռ 15-16 մ3 թափքի համար անհրաժեշտ է ոչ պակաս 4500 մմ և ոչ ավել 5000 մմ չափսերի անիվային բազա, միջինում պետք է լինի 4700մմ:

Պարզաբանում 1

Հարգելի գործընկեր, տեղեկացնում եմ, որ կտրվի հրավերի փոփոխություն,
Ձեր հարցադրումը հաշվի կառնվի հրավերի փոփոխման ժամանակ:

Հարցադրում 2

Հարգելի գործընկեր, ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 մրցույթի տեխնիկական մասնագրերում նշված է. Ընդհանուր քաշը - Ոչ պակաս – 18 000 կգ. ոչ ավել 19000 կգ, Ընդհանուր թույլատրելի բեռնվածությունը – ոչ պակաս 24000 կգ (Ընդ որում Դիմացի կամրջակի բեռնվածություն – ոչ պակաս 8000կգ և Հետևի կամրջակի բեռնվածություն – ոչ պակաս 16000կգ, որը համապատասխանում է 24000 կգ-ին): Նշված պարամետրերը հակասական են: Խնդրում ենք ճշտել անհրաժեշտ է 18000-19000 կգ, թե 24000 կգ: Նաև խնդրում ենք ճշգրտել անիվային բազան, որը նույնպես անբավարար է նման քաշային սեգմենտի մեքենայի համար: Կանխավ շնորհակալություն:

Պարզաբանում 2

Հարգելի գործընկեր, տեղեկացնում եմ, որ կտրվի հրավերի փոփոխություն,
Ձեր հարցադրումը հաշվի կառնվի հրավերի փոփոխման ժամանակ:

Հարցադրում 3

Հայտնում ենք Ձեզ,որ Ձեր կողմից պահանջվող հետևի բարձմամբ աղբատար մեքենաների տեխնիկական բնութագրի մեջ կա տարօրինակ պահանջ,այն է անիվային բազան պետք է լինի 2500-3360մմ: Ինչպե՞ս եք պատկերացնում 15-16 մ3 բեռնարկղը տեղադրել 2500-3360մմ նման կարճ անիվային բազայով մեքենայի վրա: Որպես ստանդարտ 15-16 մ3 թափքի ծավալով հետևի բարձմամբ աղբատարի անիվային բազան պետք է լինի ոչ պակաս 4500-4800մմ,քանի որ շատ վտանգավոր է կարճ անիվային բազայի վրա երկար բեռնարկղ (15-16մ3)տեղադրելը: Ամբողջությամբ բեռնվելուց հետո ծանրության կենտրոնը ետ կշարժվի,որը մեծ վտանգ կառաջացնի աղբատարը վարելու համար: Խնդրում ենք ընդունել ի գիտություն և վերանայել տեխնիկական բնութագիրը անիվային բազայի մասով:

Պարզաբանում 3
Հարգելի գործընկեր, տեղեկացնում եմ, որ կտրվի հրավերի փոփոխություն,
Ձեր հարցադրումը հաշվի կառնվի հրավերի փոփոխման ժամանակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:
Принято решение: за -3, против – 0.

2. Հրավերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին
2. О внесении изменений в приглашение

/ Գ. Աղաբեկյան, Г. Агабекян /

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց, որ օրենքով սահմանված կարգով և ժամկետում կտրվի սույն գնման ընթացակարգի հրավերի փոփոխություն:
Փոփոխության առաջացման պատճառ:
Պատասխանատու ստորաբաժանման կողմից 10.12.2024 թվականին ներկայացված գրությունը.
Փոփոխության նկարագրություն:
Հրավերով ներկայացրած տեխնիկական բնութագրում նշված «Անիվային բազա – Ոչ պակաս 2500 մմ ոչ ավել 3360 մմ» փոխարինվել է «Անիվային բազա – Ոչ պակաս 3300 մմ ոչ ավել 4300 մմ», «Ընդհանուր քաշը- Ոչ պակաս – 18 000 կգ. ոչ ավել 19000 կգ» բառակապակցությունը հանվել է:

2.2 Հաշվի առնելով հրավերում կատարված փոփոխությունները գնահատող հանձնաժողովը որոշեց, հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 26-ը, ժամը՝ 15:00-ին, իսկ հակադարձ աճուրդը՝ 2024 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը՝ 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:
Принято решение: за -3, против – 0.

Հանձնաժողովի նախագահ՝ Председатель комиссии:		Գ. Աղաբեկյան	Г. Агабекян
Անդամներ՝ Члены комисии:		Հ. Ռամազյան	У. Рамазян
		Ա. Հարությունյան	А. Арутюнян
Համակարգող՝ Секретарь комисии:		Ի. Եղիազարյան	И. Егиазарян